**Արձանագրություն N 2**
ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-18/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան | 06 դեկտեմբերի 2018թ
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Անուշ Սահակյանը
անդամներ՝ Նելլի Մելիքյանը, Հռիփսիմե Աջամօղլյանը, Լուսինե Շարաֆյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

**I. Հայտերի բացման մասին**

---------------------------------------------------------------------
(Անուշ Սահակյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| N | ***Մասնակցի անվանումը*** | | ***Մասնակցի հասցեն և կապի միջոցները*** |
|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 |
| 1 | «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ* | - | gagik@alekslabs.com |

*մասնակիցը ԱԱՀ վճարող չէ

բ/ Մասնակցի կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկած գինը հետևյալն է.

| Հ/Հ | Մասնակցի | |
|---|---|---|
| | անվանումը | առաջարկած գինը առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ) |
| 1 | 2 | 3 |
| 1. | «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ | 6435000 |
| | Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ | 6500000 |

2. Հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով սահմանված փաստաթղթը:
Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց հայտով ներկայացված փաստաթղթը և արձանագրեց, որ մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթը համապատասխանում է հրավերով սահմանված վավերապայմաններին:

2.1 Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հայտի գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և հայտի գնահատման արդյունքներով հանձնաժողովը որոշեց.

ա/ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ին: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

բ/ հարցում ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

գ/ փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 10:15-ին ք. Երևան, Նալբանդյան 13, 4-րդ հարկի դահլիճ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| նախագահ | ______________ | Ա. Սահակյան |
| անդամներ՝ | ______________ | Ն. Մելիքյան |
| | ______________ | Հ. Աջամօղլյան |
| | ______________ | Լ. Շարաֆյան |
| քարտուղար՝ | ______________ | Գ. Ջանջուղազյան |

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 06 դեկտեմբերի 2018թ.

ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-18/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սահակյանս, անդամներ՝ Ն. Մելիքյանս, Հ. Աջամօղլյանս, Լ. Շարաֆյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահի ______________ Ա. Սահակյան

անդամներ՝ ______________ Ն. Մելիքյան

______________ Հ. Աջամօղլյան

______________ Լ. Շարաֆյան

քարտուղար՝ ______________ Գ. Ջանջուղազյան